

**2022 թվականի փետրվարի 16-ից ապրիլի 12-ը ընկած ժամանակահատվածի համար արդարադատության նախարարության վերահսկողական վարչության փորձագետ Ֆրիդոն Մեղրյանի կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Ես՝ Ֆրիդոն Մեղրյանս, 2022թ-ի փետրվարի 16-ին կնքված N29 պայմանագրի հիման վրա աշխատում եմ արդարադատության նախարարության վերահսկողական վարչությունում՝ որպես փորձագետ:

2022 թ-ի փետրվարի 16-ից մինչև ապրիլի 12-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. հարկադիր կատարողների կողմից թույլ տրված ենթադրյալ կարգապահական խախտմանն առնչվող դիմում-բողոքների, դատական ակտերի ուսումնասիրություն, վիճելի իրավահարաբերության և կիրառելի օրենսդրության համադրման, հարկադիր կատարողների կողմից թույլ տրված խախտումների վերհանման, տեղեկանքների պատրաստման, որոշումների կազմման գործընթացի իրականացում:
2. հարկադիր կատարողների նկատմամբ կարգապահական վարույթի նյութերի նախապատրաստման աշխատանքների իրականացում:
3. հարկադիր կատարողների կողմից թույլ տրված կարգապահական խախտումների հիման վրա կարգապահական վարույթի հարուցման և իրականացման գործընթացին մասնակցություն:
4. ներկայացրած հաղորդումների և կից նյութերի ուսումնասիրության արդյունքում կարգապահական խախտում չհայտնաբերելու դեպքում պատասխան գրությունների պատրաստման և ելքագրման ապահովում:

Հարգանքով՝

12.04.2022թ.



Ֆրիդոն Մեղրյան